



FOR IMMEDIATE RELEASE

APRIL 14, 2022

Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքված ցանկացած վերահաս խաղաղության պայմանագիր, որը կթելադրի Արցախի կարգավիճակը, կլինի առոչինչ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, 2022թ. ապրիլի 13-ին Ազգային ժողովում ունեցած իր ելույթի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանի կառավարությունը պլանավորում է Ադրբեջանի հետ հնարավորինս շուտ կնքել խաղաղության պայմանագիր, և նշեց, որ խաղաղության պայմանագիրը կարող է ներառել հետևյալ հիմնական սկզբունքները՝ Ադրբեջանի և Հայաստանի տարածքային ամբողջականությունների ճանաչում և Լեռնային Ղարաբաղի (այսուհետ՝ Արցախ) վերջնական կարգավիճակի հստակեցում, որի հետ կապված Հայաստանը կիջեցնի իր նշածողը:

Մենք, Հայ իրավաբանների Միության կառավարման խորհրդի անդամներս, հայտնում ենք մեր իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքված վերահաս պայմանագիրը, մասնավորապես Արցախի իրավական կարգավիճակի որոշումը, միջազգային իրավունքի համաձայն կլինի առոչինչ:

Առաջին, պայմանագիրը կլինի Ադրբեջանի կողմից սպառնալիքով և իրական ուժի կիրառմամբ ապօրինաբար ձեռք բերված: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան, որի անդամ են և՛ Ադրբեջանը, և՛ Հայաստանը, հոդված 52-ով սահմանում է. «պայմանագիրը համարվում է առոչինչ, եթե այն կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ:»

Միջազգային իրավունքի՝ ուժի կիրառմանը վերաբերվող սկզբունքներից երկուսը, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, նախատեսում են.

- Հոդված 2(3). Բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը կարգավորում են խաղաղ միջոցներով, այնպես, որ վտանգի չենթարկվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը:
- Հոդված 2(4). Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և/կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից:

Վարչապետ Փաշինյանը իր ելույթում հստակեցրեց, որ Հայաստանի ձախողումը արագորեն համաձայնեցնել Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիրը, վերջինիս առաջ քաշած պահանջներով, կբերի Ադրբեջանի կողմից

Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ ուժի նոր կիրառման, ենթադրաբար՝ Սյունիքում: Այս մտավախությունը հիմնավորվում է փաստերով: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ առաքելությունը հաստատում է, որ խաղաղության պայմանագրի շուրջ իր առաջարկները ուղարկելուց հետո, Ադրբեջանի զինված ուժերը ներխուժել են Արցախի Փառուխ գյուղ: Ավելին, ադրբեջանցի զինվորները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում, որտեղ Ադրբեջանը ներխուժել էր 2021թ. Մայիսի 12-ին և Նոյեմբերի 16-ին:

Այսպիսի հանգամանքներում, Ադրբեջանի հետ ցանկացած <<խաղաղության>> պայմանագիր ձեռք բերված կլինի Արցախի դեմ ուժի կիրառման սպառնալիքով՝ խախտելով ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 2(3)-ը, և Հայաստանի Հանրապետության դեմ՝ ուժի կիրառման սպառնալիքով՝ խախտելով ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 2(4)-ը:

Երկրորդ, պայմանագիրը Արցախի Էթնիկ հայկական բնակչությանը ապօրինաբար կզրկի իր ինքնորոշման իրավունքից: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի հոդված 53-ի համաձայն. <<Պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին:>> Միջազգային իրավունքի այդպիսի պարտադիր նորմերից մեկը ժողովուրդների ինքնորոշման իրավունքն է: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

Հայաստանի և Ադրբեջանի միջև պայմանագիրը, որը նպատակ ունի որոշել Արցախի իրավական կարգավիճակը Ադրբեջանի ենթակայության տակ, կզրկի Արցախի ժողովրդին իր ինքնորոշման իրավունքից երկու պատճառով.

- Ո՛չ Արցախի ժողովուրդը, ո՛չ կառավարությունը ներգրավված չէ պայմանագրի շուրջ բանակցություններում, որը ներառում է իրենց քաղաքական կարգավիճակի որոշումը:
- Բազմաթիվ ապացույցներ կան, որ Ադրբեջանը կզրկի Արցախի ժողովրդին որևէ նշանակալի խոսքից՝ կապված տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման հետ: Սովետական Ադրբեջանի կառավարությունը նման կերպ է վարվել սովետական շրջանում, այդ թվում ռազմական պատասխան տալով 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեին, որը անց է կացվել Սովետական միության օրենսդրության համաձայն և որում ընտրողների թվի 99.89%-ը կողմ է քվեարկել անկախությանը: Ավելին, Ադրբեջանի Հանրապետության գործող կառավարությունը՝ Իլհամ Ալիևի գլխավորությամբ, տասնամյակներով զարգացրել է մի պետական քաղաքականություն, որը հիմնված է և խրախուսում է Արցախի բնիկ հայերի նկատմամբ ատելությունը: Այս ամենը հաստատված է ՄԱԿ-ի Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտեի, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի հանձնարարականներում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում:

Խորհրդի առաջարկությունն է.

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի համաձայն, իրավականորեն վավեր լինելու համար, Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագիրը պետք է կնքվի հետևյալ հանգամանքների առկայությամբ.

1. Որպես առանց հարկադրանքի բանակցություններ սկսելու նախապայման, Ադրբեջանը պետք է պաշտոնապես հրաժարվի Հայաստանի և Արցախի Հանրապետությունների դեմ ուժի կիրառումից:
2. Պայմանագիրը չպետք է նպատակ ունենա որոշել Արցախի վերջնական իրավական կարգավիճակը և պետք է թողնի այդ հարցը այն ժամանակվան, երբ Հայաստանի և Արցախի ու Ադրբեջանի ժողովուրդների միջև հարաբերությունները բարելավվեն, իսկ Ադրբեջանի կառավարությունը վստահելի քայլեր ձեռնարկի ցույց տալու իր բարի կամքը Արցախի ժողովրդի, նրա իրավունքների և արժանապատվության նկատմամբ:
3. Արցախի ժողովուրդը պետք է մասնակցի տարածքի վերջնական իրավական կարգավիճակի որոշմանը: